ոք դատաւոր և տուն դատաստանի մի՛ յիշխեսցի 'ի վերայ սոցայ, այլ եթէ սոքայ ըստ կամաւ ելցեն և դանդատեսցեն 'ի տուն դատաստանի հարկաւոր է դատաւորն ընդունեսցի կամք յանդիմանողին դանդատողի իւրոյ, եթէ յանդիմանողն նա՛ կամի մատանել դատաստան, ապա ըստ Օրինօքն հայոց դատեսցեն նոցա, եթէ ո՛չ պարտաւորեսցէ նոցա զի ընտրեսցեն դատաւոր 'ի միջի իւրեանց, ընդունեսցեն վճիռ 'ի դատաւորացէ իւրեանց ըստ հնոց սովորութեան յազգին իւրեանց, բայց 'ի մեղաց քրէական որ ամենեքեան պարտ են ընդունիլ վճիռ դատաստանի յաշխարհին հայոց, որում իւրեանք բնակին։

ԳԼՈՒԽ ՅՀԱ.

Ո՛չ ոք սպասաւոր 'ի որ ոք իշխանի և իշխանութենէ հրամանաւ որ իցէ մի՛ մտցի 'ի սենեակս կանաց, յատկապէս կանաց ամուսնացելոց, զի մաքուր է և դալար, ո՛չ ոք աղմուկ և դղրդում և տարակուսութիւն ո՛չ ցանկամք ծնողաց մերոց կանաց և ապագայ ծնանելոյ վասն մեր որդոց մայրց, վասն որ ոք պարտականութեան որ իցէ, բաց վասն քրէական և մահապարտ առն ըմբռնելոյ յաղագաւ։

ԳԼՈՒԽ ՅՀԲ.

Ամենայն ծայրագոյն իշխան 'ի վերայ վի-